

ՀԱՍԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԷՐԵՐՈՒՆԻ ԱՍՐՈՑԻ ՄԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԳԱՅՍԵՐՅԱՆ Վ. Ա.

Արձանագրությունը հայտնաբերվել է 1968 թ., Երևանի 2750-ամյակի տոնակատարությունների նախօրյակին իրականացվող լայնածավալ պեղումների ընթացքում, Խալդի աստծո տաճարի հրվ. - արմ. պատի ստորին շարվածքում: Ութ տողից բաղկացած արձանագրությունը, չնայած բազմաթիվ հրատարակություններին¹, լրիվ թարգմանված չէ և կիսով չափ մնում է անհասկանալի:

Արձանագրության գիտական տառադարձումը և թարգմանությունը տալիս ենք ըստ Մ. Բարայեյանի, որը համեմատաբար առավել ամբողջական է ներկայացրել այն:

- | | |
|--|--------------------------------|
| 1 D Hal-di-i-e e-ú-ri-i-e | Խալդիին՝ տիրոջը |
| 2. i-ni É Ar-gi-iš-ti-še | այս «տունը» Արգիշթին |
| 3. I Mì-nu-a-ḫi-ni-še ši-di-iš-tu- ú -ni | Մինուայան կառուցեց: |
| 4. I Ar-gi-iš-ti-i-še a-li | Արգիշթին ասում է՝ |
| 5. i-na-ni I.ME-na-ni e-di-ni | այս ծիսակատարությունների համար |
| 6. ši-bu-li-ni ši-du-li-ni | թող - šibulini, թող կառուցվի |
| 7. me-i e-si-me-ši el-mu-še | |
| 8. ma-a-nu- ú -ni-i | (7-8) |

Ինչպես տեսնում ենք, արձանագրության կադապարային բնույթի ներածական բանաձևից բացի(1-4 տողեր), որտեղ Արգիշտի արքան հայտարարում է Խալդի աստծու տաճար կառուցելու մասին, մյուս հատվածը մնում է գրեթե անհասկանալի: Ի տարբերություն նախկին հրատարակիչների, 5-րդ տողում Մ. Բարայեյանը երկրորդ բառի առաջին՝ *i* և *me* նշաններն ընկալելով որպես գաղափարագրեր՝ *I* (աքքադ. *Nadu* «երկրպագել, փառաբանել») և *ME*, *MA* (աքքադ. *parsu* «ծես, արարողություն»), *I.ME*-ն

¹ Арутюнян Н. В., Оганесян К. Л. Новые урартские надписи из Эребуни [Вестник древней истории (այսուհետև՝ ВДИ), 1970, - 3, с. 109]; Меликишвили Г. А. Урартские клинообразные надписи (Зблбх-С)п"а УКН), М., 1960, հավելված ԹԺԼ, 1971, - 3, 4, Բարայեյան Մ. Ա., Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն (այսուհետև՝ ԷԲՔՊ), Ե., 1971 - 17, էջ 169:

թարգմանել է «ծիսակատարություն»², որն, ինչ խոսք, լիովին ընդունելի է: Ողջ տողը, որը հեղինակը թարգմանում է «այս ծիսակատարությունների համար», պետք է թարգմանել «այսուհետև ծիսակատարությունների ժամանակ», քանի որ արձանագրություններում բազմիցս վկայված *h. e. i-ni* ցուցական դերանունն է թարգմանվում «այս» (հմմտ. խեթ. *anṇš*, հուն. *ἐν*, լատ. *enim*, հին հնդկ. *ana*, ումբր. *ene*, և այլն, բոլորն էլ «այս» իմաստով)³, իսկ *i-ni-ni* (*i-ni* դերանվան հոգնակի թվի բացառական - գործիական հոլովով դրված ձև) կնշանակի «այս-ու-հետև, սրանցից - հետո»⁴:

Տողի վերջին *edini* բառն էլ, որին մասնագետների կողմից տարբեր իմաստներ են վերագրվում⁵, հավանաբար, ունեցել է նաև «ժա-մանակ» իմաստը, որը թերևս հնարավոր է հիմնավորել *edini/eden* (*di=de* և բառավերջի անշեշտ ձայնավորի անկմամբ) > *haj. ադեն/ատեն* «ժամանակ, ընթացքում, պահ» զուգահեռով (բառասկզբի *e>ա* օրինաչափ անցմամբ): Այսինքն, եթե հինգերորդ տողի «այսուհետև ծիսակատարությունների ժամանակ (ընթացքում)» թարգմանությունն ընդունելի համարենք, ապա կարող ենք ասել, որ հաջորդ տողերում պիտի խոսվի Արգիշտի արքայի որոշակի հրամանի կամ սահմանած կարգի մասին, որն «այսուհետև» պետք է կատարվեր «ծիսակատարությունների ժամանակ (= ընթացքում)»:

Վեցերորդ տողի առաջին *ši/e-bu-li/e-ni* բառը այլ արձանագրություններից հայտնի չէ, և մասնագետներից որևէ մեկը չի անդրադարձել այդ բառի թարգմանությանը: Միայն Մ. Բարայեյանն է կարծիք հայտնել, որ այն իր իմաստով հավանաբար պիտի մոտ լինի հաջորդ *šidu* «կառուցել, շինել» բային⁶:

Իսկ իրականում ինչ կարող էր նշանակել այդ բառը:

² Բարայեյան Մ. Ա., նշվ. աշխ.:

³ Гамкрелидзе Т. В., Иванов В. В. *Индоевропейский язык и индо-европейцы* (այսուհետև՝ *ИЯиИ*), Тбилиси, 1984, с. 385, прим. 2:

⁴ Ֆ. Քյոնիգը *inani*-ն թարգմանում է «դրան նախորդող» [Konig F. W. *Handbuch der chaldischen Inschriften*, Graz (այսուհետև՝ *HGhI*. I - 1955, II-1957), II, S. 187], իսկ Գ. Մելիքիշվիլին՝ «այս կողմից, այստեղից» (YKH, էջ 397):

⁵ Գ. Ղափանցյանը *edini*-ն նույնացնում է հայերեն անդէն «այնտեղից» բառի հետ [Ղափանցյան Գ. Ուրարտուի Պատմությունը (այսուհետև՝ ՈւՊ), Ե., 1940 1940, էջ 38], Ֆ. Քյոնիգը *edini*-ն թարգմանում է «նախորդող, սրան նախորդող» (*HGhI*), II, S. 187, Գ. Մելիքիշվիլին՝ «այնտեղից, համար, հետո, հետևանքով, այնուհետև» (ձԽԾ, с. 393), Բ. Ղյակոնովը՝ «պատճառով, համար» Дьяконов И. Урартские письма и документы (այսուհետև՝ УПД), М.—Л., 1963, с. 88, Բ. Մեշանինովը՝ «որպես, համար» (Мещанинов И. И. Аннотированный словарь урартского /биайнского/ языка (այսուհետև՝ АСУБЯ), Л., 1978, с. 106.

⁶ Բարայեյան Մ., նշվ. աշխ., - 17, ծան. 2:

Հաշվի առնելով, որ արձանագրության ներածական մասի (1-4 տողեր) և՛ բառապաշարը, և՛ քերականական առանձնահատկությունները մեկնաբանվում են հայերենով՝, ինչպես նաև ելնելով այն հանգամանքից, որ սեպագիր տեքստերից հայտնի *§*-ով սկսվող բոլոր բառերը *h*- ե.՝ հայկական ծագում ունեն⁸, հնարավոր ենք համարում *§i/ebuli/eni* բառը նս մեկնել հայերենով:

Այսպես. հայտնի է, որ ինչպես բառակազմում, այնպես էլ բառամիջում սեպագիր *-e* - ն հայերենում տալիս է *-ա-* (օրինակ՝ *alzen(i)* > արձան, *šerab(e)* > ծարավ, I *Erek-ua* > Արաք-ս և այլն⁹), իսկ *bu* (բու) վանկը՝ վա [օրինակ՝ URU Ere-bu-n(i) > Երե-վա-ն], որից հետո կստացվի ծավալին (վերջին կիսաձայն *i*-ի անկմամբ), որը հայերենի ծաւալիլ «տարածել, սփռիլ»¹⁰ բայի սահմանական եղանակի ներկա ժամանակի հոգնակի III դեմքով դրված ձևն է: Այսինքն, այս բառը նախորդ տողի հետ միասին կթարգմանվի. 5. «այսուհետև ծիսակատարությունների ժամանակ 6. թող ծավալեն (=տարածեն, սփռեն)...»:

Տողի հաջորդ բառը՝ *šidulini* - ն, մեր կարծիքով, կազմված է *š*i/*ed* (*u*) «կառուցել, շինել, հիմնել»¹¹ *h*-ե. արմատից (հմմտ. լատ *situs* «շինված, հիմնված», զնդ. *šiti* «բնակարան», սանս. *ksiti* «բնակարան», հուն. *xtiζω* «շինել», հայ. շէն, շին-ել և այլն¹²) հայերենի դերբայական *-ող*(=սեպ. *-ul*) մասնիկից և գործիական հոլովի-ին (*-in*) (վերջին կիսաձայն *i/e* անկմամբ) վերջավորությունից: Այսինքն, *š*i/ *edulin(i)* բառը կնշանակի «շինողին, կառուցողին, հիմնողին, իսկ 5-6-րդ տողերը միասին կթարգմանվեն՝ 5. այսուհետև ծիսակատարությունների ժամանակ 6. թող-ծավալեն (տարածեն, սփռեն) շինողի (անունը): Արձանագրության վերջին երկու տողերը նույնությամբ հանդիպում են նաև Բշպուհինի և Մենուա արքաների Մհերի դռան նշանավոր արձանագրությունում, որտեղ այն վկայված է երկու անգամ¹³ և Արգիշտիիսինի-Արմավիրից հայտնաբերված երկու արձանագրություններում, որոնցից մեկը պատկանում է Սար-դուրի II-ին (765-735 թթ. մ.թ.ա.)¹⁴, իսկ երկրորդի հեղինակը հայտնի չէ¹⁵: Տարբեր արձանագրություններում և մոտ

⁷ Զահուկյան Գ., Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հնարավոր հայկական բնույթի մասին [Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 2000, - 3, էջ 124-129]:

⁸ Այդ բառերն են. *šerab(-ae)* > ծարավ, *šu(e)* > ծուծով, *šeš(-uli)* > ծես, *šuli* > ծորալ (ծլ-ծլ-ալ), *šar(i/e)* > ծառ, *šin* > ծին [Diu- *šin* (i), I *šin-alibi* և այլն]:

⁹ Նույնացումները մերն են:

¹⁰ Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. II, Ե., 1973, էջ 450:

¹¹ YKH, c. 407, YΠΔ, c. 91:

¹² ՀԱԲ, հ. III, Ե., 1977, էջ 513: Հայերենի շէն բառին վերագրվում է իրանական ծագում (նույն տեղում), սակայն, կարծում ենք՝ այն առաջացել է սեպագիր վկայած *Ši/ed(u)* ձևից [šed > šet+n (ն) աճական > շէտըն շէլըն շէն՝ հայերենին բնորոշ անցմամբ]:

¹³ YKH, № 27, արթու 31, 94:

¹⁴ Նույն տեղում, - 169, տող 13:

¹⁵ Նույն տեղում, - 143, տող 2:

մեկդարյա ժամանակային (820-735 թթ. մ.թ.ա.) տարբերությամբ կրկնվող այս հատվածն, անշուշտ, կադասարված /շաբլոն/ բանաձև է, որն օգտագործվել է դպիրների կողմից:

Հարկ է նշել, որ քննարկվող տողերը ոչ միայն թարգմանված չեն, այլև դրանց վերջնական բառաբաժանումն անգամ գոյություն չունի¹⁶: Այսպես, 7-րդ տողի *ešimesi* ընթերցված բառը, որը բոլոր հրատարակիչները դիտարկել են որպես մեկ բառ, մեր կարծիքով, պետք է բաժանել երկու առանձին՝ *eši* և *mesi* բառերի, որոնցից առաջինը վկայված է նաև սեպագիր այլ տեքստերում¹⁷: Առաջին՝ *eši* բառը, մեր կարծիքով, հայերենի էս, նաև բառասկզբի է>ս անցմամբ աս «սա, այս» եզակի առաջին դեմքով դրված ցուցական դերանունն է (վերջին կիսաձայն *i* -ի անկմամբ և *š*-ս օրինաչափ անցմամբ, ինչպես, օրինակ *šeš-uli>ծէս*)¹⁸, որոնք նույնությամբ պահպանվել են հայերենի գրեթե բոլոր բարբառներում¹⁹:

Հաջորդը՝ *mes/i/* -ն անկասկած, *h.-ե meg(h)/mek(h) > հայ. մեծ*, «շատ, գորեղ»²⁰ բառի առաջին սեպագիր վկայությունն է, որն առանց որևէ հնչյունափոխության, դատելով (վերջին կիսաձայն *i* -ն թերևս չի էլ հնչել) պահպանվել է հայերենում:

Տողի վերջին՝ *elmuše* բառը, դատելով հատվածի բովանդակու-թյունից, ինչպես նաև վերջին՝ *manuni* բառի «ժողովուրդն իմանա» (բառացի՝ «մարդիկ ունենան», սեպ. *manu< h.-ե *manu* «մարդ, տղամարդ»²¹ և հայ. ուն-իլ «ունենալ» *h.-ե. *op-n*²² «ուն-իմ/լ») իմաստից, հավանաբար, նշանակել է «լուր», «հրաման», «պահանջ»²³ և այլն:

Այսպիսով, եթե ամբողջացնելու լինենք, ողջ արձանագրու-թյունը կթարգմանվի.

1. Խալդիին՝ տիրոջը

¹⁶ Գ. Մելիքշվիլին այդ առիթով գրում է. «Մենք համոզված չենք ներկայաց-ված բառաբաժանման ճշտության մեջ, միգուցե պետք է լինի *ešime šielmuse(?)*» (նույն տեղում, - 143, ծան. 3):

¹⁷ Նույն տեղում, - 33, տող 3, - 281, տող 22:

¹⁸ ՈւՊ, էջ 39:

¹⁹ ՀԱԲ, հ. I, էջ 171: Հետաքրքիր է, որ Մարադայի բարբառը պահպանել է սեպագիր էջ - «այս» ձևը (նույն տեղում):

²⁰ ՀԱԲ, հ. III, էջ 295, **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն (այսուհետև՝ ՀԼՊ), Ե., 1987, էջ 51:

²¹ ИЯнИ, с. 759:

²² ՀԱԲ, հ. III, էջ 602, ՀԼՊ, էջ 112:

²³ Առայժմ առանց մանրամասն ստուգաբանության ենթ թողնում *elmuše* բառը, որը, հավանաբար, իր *elm(u)* արմատով նույնանում է *h.-ե. p□ l - m - (h)ուն. πολेम(os), нонu полемика*, հայ. աղմուկ (բոլորն էլ՝ «գոչուն, աղաղակ, բանավեճ» իմաստով) արմատի հետ: Հայերենում աղմուկ բառը թերևս սկզբնապես ունեցել է «բարձրաձայն ասված խոսք, գոչուն, լուր, հրաման իմաստը (հմմտ. աղէ՝ «ասել, հայտարարել»)»:

2. այս <տունը> (եւ) Արգիշտիս,
3. Մենուայանս կառուցեցի:
4. (եւ) Արգիշտիս ասում եմ.
5. այս (ուհետև) ծիսակատարությունների ժամանակ (ատեն)
6. թող - ծավալեն = (սփռեն, տարածեն (շինողի) անունը):
7. թող - այս մեծ = (կարևոր) լուրը
8. ժողովուրդն իմանա (մարդիկ ունենան):

Եվ այսպես. ինչ կարող ենք ասել այս արձանագրության մասին:
Առաջինը և ամենակարևորը թերևս այն է, որ 2796 տարի առաջ Արգիշտի արքայի հրամանով գրված և մինչ օրս որևէ կապակցված թարգմանություն չունեցող այս արձանագրությունը կազմված է բացառապես հ. է. նախալեզվով, և այն համարձակորեն կարող ենք նախագրաբարյան հայերենի առաջին գրավոր վկայություններից մեկը համարել:

О ПЕРЕВОДЕ ОДНОЙ ИЗ НАДПИСЕЙ КРЕПОСТИ ЭРЕБУНИ

ГАЙСЕРЯН В. А.

Резюме

Надпись была выявлена в 1968 г. в нижнем ряду юго-западной стены храма бога Халди. Восьмистрочная надпись по сей день не переведена.

Имеется перевод 1-4 строк этой надписи. Перевод остальных слов 6-8 строк (1. *šiebulini/ šebulin/* > *tsavalin* "распространяли, расстилали"; 2. *šidulini* > *shinoghin* "строи-теля"; 3. *esi* > *es, as* "это"; 4. *meši* > *mets* < *u.e.*meg/*mek(h)* (большой, великий); 5. *manuni-manu+uni* (*u.e.*manu* "человек, мужчина", *uni* "иметь") позволяет перевести весь текст следующим образом:

1. Богу Халди – владыке
2. этот <дом> (я) Аргишти,
3. Менуаян (сын Менуа) построил
4. (я) Аргишти говорю:
5. от (ныне) во время <обрядов>
6. пусть распространят (имя) строителя.
7. пусть эту (великую) важную весть
8. узнает народ (люди).

Подобный перевод надписи дает возможность заключить, что она была армяноязычной, и весь текст можно считать одним из первых письменных свидетельств дописьменного периода.

ON THE TRANSLATION OF AN INSCRIPTIONS
ON EREBUNI FORTRESS

V. GAYSERYAN

Abstract

The inscription was revealed in 1968 in the lower row of southwestern wall of the temple of God Khaldi. In spite of many publications, the inscription, consisting of eight lines, remains partially unintelligible.

Taking into consideration the fact that the introduction /lines 1-4 /is interpreted in the Armenian language, we consider it also possible to interpret the unintelligible words of the line 6-8. These words are the following:

1. šibulini/ šebulin/ > tsavalin "spread, spread out"
2. šidulini > shinoghin (builder)
3. esi > es, as "this"
4. meši > mets< IE*meg/*mek(h) (great)
5. manuni-manu+uni (IE *manu "human, man", uni "to have)

The final translation of the inscription:

1. To Khaldi – Lord
2. this <house> /I/ Argishti,
3. Menuayan/ the son of Menua/ built
4. /I/ Argishti declare:
5. here/inafter/ during the <ceremonies>
6. let them spread /the name/ of the builder.
7. let this great grand news
8. be shared with the nation/ people.

Hece, based on this translation, we can state that that the inscription was written in Armenian and the whole text can be considered as one of the first written illustrations of the language dating back to the period prior to the Old Armenian /Grabar/.